

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ
Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ
Հիշու թիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2,60 Տոլար
Վեցամսեայ 1,50 "
ԿԱՆԵՍԻԿ

Ծրանշարման տողը
20 ամսական



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА

Գրութիւնք եւ

լէւ տրուիր

ՄԵՐ ԸՆՏՐԵԼԻՆ

—+—

Պատգամաւոր Տ. ՅԱԿՈՐ

ՄԱՎԵԱՆ

Առաջնորդ՝ ՏԵՐ ՆԵՐՍԷՍ
ԵՊԻՍԿ. ԱՐՍԼԱՆԵԱՆ

ՀԱՅՈՒ ԴԵՍ

ԶԵՆՔ ԶԸ ԳՈՐԾԱԾԵԼ

—+—

Ողբացեալ ժամհարեանցի, Միս-
Շահէնի և Չիթեանի սպանու-
թիւններէն յետոյ, բարերար Թա-
մարեանի սպանման լուրն ալ եկաւ
հասաւ. այս վերջինն եւս Յ փոք-
րիկներ որք կը թողու իր ման-
կամարդ կնոջ հետ. եւ այս բո-
լոր եղբայրասպանութիւնները կը
գործուին կովկասի մէջ խեղճ ու
տգէտ թրքահայ զիւղացի մշակ
ներու ձեռքով, կատարելապէս
անգիտակից իրենց բրաւին յոռի
կողմերուն, բոլորովին կոյր գոր-
ծիք եղած և շատ անգամ անձ-
նական, կուսակցական կիրքերէ և
կամ շահագիտական նկատումներէ
առաջնորդուող անձերէ կամ խմբ-
բաններէ թելադրուած:

Բնաւ տարակոյս չկայ թէ ըս-
պանները հայրենասիրական
պարտականութիւն մը կատարած
բլլալու համոզումով այդ ոճի-
րները գործած են իրենց կեանքն
ալ վտանգելու անձնութեան թաւա-
րայց բուն թելադրիչները՝ ոճի-
ր գործուելէ և տեղափոխին օճիքը
ձեռք անցնելէ յետոյ՝ ինչու հա-
մար խուլ եւ համար կը մնան հան-
րային կարծիքին առջեւ ինչու հա-
մար իրենց գործել տուած եղեւունը
չեն պաշտպաններ կամ չեն համար-
ձակիր խոստովանել, զոնէ արտա-
սահմանի ազատ մամուլին մէջ,
եթէ իրենց գործել տուած եղեւ-
ունը հանրային տեսակետով օգտա-
կար գործ մըն է, պէտք է հա-
մարձակութիւնը ունենան, զայն
գատապարտող անկախ քննադ-
տութիւններու գէժ, իրենց հա-
մոզկիր տեսութիւնները պարզելու և
սպաննութեան վճիռը արդարա-
ցնող փաստերը ու նկատումները
հանրութեան դատաստանին են.

թարկելու, եթէ երբեք մազի չսփ-
արդարանալի կողմեր ունին. Հան-
րութիւնը իրաւունք ունի իր շահուն
աւանդով արտապահուած վճիռնե-
րուն արդարացիօրէն պատճառ-
ները՝ անոնց գործադրութենէն ե-
թէ ոչ ուրիշ, գոնէ վերջը՝ իմա
նախ. Ողջ օրէնքներով առաջ
նորդուող կազմակերպուած կուսա-
կապարութիւնները իսկ անկախ
դատարաններու կողմէ արտասո-
նուած ծանր վճիռները իրենց դր-
դապատճառներով միտող մամու-
լի միջոցաւ հանրային դատաստա-
նին կենթարկեն. Հայ ժողովուրդն
ալ ինչու չհասկնայ երբեմն իր
բարերարներու, իր գործիչներու
դատապարտութեան պատճառները
երբ այդ դատապարտութիւնը դա-
տապարտեալն զատ մէկ քանի ալ
միամիտ ու անձնուէր ահաբեկիչ-
ներու կորստեան պատճառ կրկայ:

Ժամհարեանցի, Շահէնի, Չիթե-
անի և Թամարեանի սպանու-
թեանց թելադրիչները՝ որոնք ար-
տասահմանի մէջ իրենց թմբակա-
հարները ունին, ինչու չփորձեցին
այդ ոճիւրներուն դէմ գոռացող
հանրային կարծիքը մեղմել իրենց
փաւտերով ու նկատումներով, եթէ
երբեք ասոնք արդարանալի էին:

Ոչ թէ միայն այդ համարձա-
կութիւնը չունեցան, ալ կամ
թելադրութիւններն ուրացան ար-
դահատելիօրէն կամ հանրային
կարծիքին իրենց գէժ արտասա-
նուած «պատ եղբայրասպաններ»
վճիռին լուսութեամբ համակերպե-
ցան. Բայց ինչ օգուտ որ
մեծարելի բարերարներ եւ պաշտե-
լի գործիչներ իրենց գերեզման-
ներէն ալ ետ չեն փրադառնար,
անոնց միամիտ տեղափոխներն ալ
ծանր պատիժներէ չեն ազատիր,
սակայն ասդին բուն եղբայրա-
պան-թելադրիչները կը մնան ի-
րենց դիրքին մէջ տգատ եւ ան-
կախ, ու ստէպ ալ յուրեան և
ուրացումի շնորհիւ չքմեղուած:

Կարճ ժամանակի մէջ իրարու
յսլորդող այն տխուր ու քստմե-
լի դէպքերը շատ լուրջ դաս մը
կը ներկայացնեն մեր միամիտ ու
ոչ-գորգացեալ երիտաւարներուն
Ասոնք զոնէ արտասահմանի մէջ
տեսան թէ հայուն հայը սպաննել

թելադրող մարդիկ կամ յեղափո-
խականներ գրեթէ միշտ ան-
հասական հակառակութեան կամ
կուսակցական հաշիւներով եւ կամ
անձնական շահագիտութեան պատ-
ճառաւ դաշտն ու գէնք կուտան
միամիտ հայրենասէրներու ձեռքը
եւ ասոնք անգիտակցօրէն կ'ը-
թան ժամհարեանցի նման բարե-
րարներ կամ Շահէնի նման հերոս-
ներ սպաննել. Որպէս զի այս տը-
խուր եղբայրասպանութիւնները
չը շարունակուին, միակ միջոց մը
կը մնայ մեր միամիտ կամ նուազ
դատարանական հայրենասէր երի-
տասարդներուն ընտրելու. այդ
միջոցը շատ պարզ է, մանաւանդ
թելադրիչ գործառնեց բացա-
ռութեան ընդունելի. այն է հա-
յու ղեմ գէնք չը գործածել, ով որ
ալ թելադրէ կամ հրամայէ եւ ինչ
պատճառներ ալ ցոյց տրուին:

Թերեւս գտնուին ոմանք որ ա-
ռարկեն թէ այս ցոյց տրուած մի-
ջոցը յեղափոխական կարգապա-
հութեան սկզբունքին կը հակա-
ռակ. Մենք այս առարկութեան
կը պատասխանենք թէ, քիսկիւն-
գիր, շահամոլ յեղափոխական վա-
րիչներու զրգումով գործուող եղ-
բայրասպանութիւնը աւելի մեծ
աւերներ կը գործէ. մինչդեռ «հա-
յու ղեմ գէնք չգործածելու» սկզ-
բունքը բարիքէ զատ ոչ մէկ չա-
րէք առաջ չբերիր. եթէ գործը
հոն գայ որ հայ դաւաճան մը
գտնուի ու զանի պատժել հարկ
դատուի, այդ միակ գործը թող
կատարէ ինք անձամբ այն յեղա-
փոխական վարիչը որ խորապէս
համոզուած է թէ այսինչ հայը
դաւաճանութիւն գործած է. աւ-
պարգային անձնին վտանգե-
լու, հանգիստին վրդովելու քչիկ
մը անձնութեան յեղափո. վա-
րիչներն ալ ունենալու են անշուշտ
Ուստի մեր առաջարկած միջոցը
ոչ յեղափո. կարգապահութեան եւ
ոչ գործին կը հակառակի, այլ
միայն մեծագոյն շարիքի մը առ-
ջեւ կանգնէ, բաւական է որ մեր
ոչ գորգացած երիտասարդութիւ-
նը մտքի մէջ դրոշմէ Հայուն ղեմ
գէնք չը գործածելու սկզբունքը,
և այս սկզբունքին դէմ ո՛ր է քաջ
առնելու առաջարկ մը ընդունած

ատեն յիշէ Միս-Շահէնը, Չիթե-
անը, Ժամհարեանցը եւ ուրիշ
անմեղ հայրենասէր զոհեր որոնց-
մէ ազգը տարածած զրկուեցաւ
խաբուած ահաբեկիչներու միա-
մտութեամբ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱԳԱՊԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՍ

Մեզ թւում է որ հայկական միտքը
չափից աւելի զբաղեցաւ գիտնալու
համար թէ որի՞ ուղղից Գալիցիին՝
թէ Պօթիէի օջոսցեւի—ծնունդ առաւ
հայկական դարաւոր աշխատանքի ար-
գասիք եղող եւ հայ եկեղեցիին, որ-
պէս անկապտելի սփականութիւն,
նուիրուած միլիոնաւոր հայատու-
թիւնը մի անգամից, մեկ գրչի հաւ-
նաճով, ուսական գա՛մարանը գրա-
ւելու, յափշտակելու հրէշաւոր միտ-
քը—այդ շատ երկրորդական, երրոր-
դական կարեւորութիւն ունեցող հարց
է, մեր կարծիքով:

Կալիցիին, Պօթիէի օջոսցեւը եւ
կամ ուրիշով ուղղում է լինի, որքան
էլ իրաւունք ունենան իրենց վերայ
դարձնելու ընդհանուր հայ ժողովրդի
հասկանալի, արդար հայոյթին ու
անսահման ատելութիւնը, վերջի
վերջոյ իրանցից ուրիշ բան չեն ներ-
կայացնում, բայց եթէ ստորագա-
սանպատասխանատու ծառաներ, պաշ-
տօնեաներ, որոնք կոչուած են ծա-
ռայելու, աւելի կամ նուազ հաւա-
տարմութեամբ, աւելի կամ նուազ
խելքով ու եռանդով, քաղաքական
այն խոչոր, այն հսկայ մարմինն՝ որ
կոչուում է «ուսական» պետութիւն:
Ոչ էլ առանձին նշանակութիւն ունի
այն միւս հարցը թէ նախարարների
խորհրդին մէջ ձայների մեծամասնու-
թիւնը դոյացել է այդ մասին թէ ոչ,
զրանք մեզ համար խնդրի միայն ա-
ւելի կամ նուազ հետաքրքրական
կողմնակի հանգամանքներն են: Բա-
ւական է գիտենալ որ բոլոր Ռուսաս-
տանի տէր եւ միանեման եւ միակ
պատասխանատու անձը, Նիկոլա Բ.,
հարկաւոր է համարել, առանձին ու-
կազով, հաստատել այդ որոշումը եւ
հրամայել նրա անմիջական գործադ-
րութիւնը, իւր վերայ առնելով գոր-
ծի բոլոր պատասխանատուութիւնը,
որպէս միապետ-ներկայացուցիչ ուս-
ական ազգի եւ համայն պետութեան
Այս բոլորի մէջ, մեր կարծիքով,
զիւսաւոր նշանակութիւն ունեցող
հարցը, առաջին եւ վերջին հարցը,
որի վերայ միայն եւ ամենից աւելի

պէտք է կեդրոնական հայկական մտ-
քերը իրենց բոլոր ուժով, իրենց բո-
լոր կարողութեամբ, հէնց ի՛նքը, ա-
ռաջարկուած միտքն է, կատարուած
իրողութիւնն է :

Այո՛, հէնց ի՛նքը, այդ խոշոր, այդ
համաշխարհային գալթակղութիւն
պատճառող անպատկառ յափշտակու-
թեան իրողութիւնն է, որով ծան-
րապէս եւ լրջօրէն պէտք է գրադուին
բոլոր ուսանող մտքերը, բոլոր
տաճկահայ մտքերը—ընդհանուր հայու-
թիւնը, առանց աշխարհագրական կամ
այլ ո՛ր եւ է խտրութեան : Եւ նրանք,
հայերը, պէտք է զբաղուին այդ ի-
րողութեամբ, ընդունելով նրան ոչ
որպէս սոսկ իրողութիւն, ինքն իւր
մէջ, այլ որպէս սիւնսիւն, որպէս նը-
շան այն նախապէս ծրագրուած, ըն-
դունուած ֆաղափառութեան, որին
հետեւում է ուսանական պետութիւնը,
որին հետեւում են ձարերը, անսահ-
ման ժամանակի միջով, երկաթեայ
կամքով, անյողողող յամառութեամբ
եւ միանգամ ընդմիջող դժուած, վայր
բերուած, որոշուած սխտէմով, մէ-
թոքով ու կանոնաւորութեամբ :

Այդ քաղաքականութիւնը, գի-
տենք ամէնքս, ձուլում են քաղաքա-
կանութիւնն է :

Ռուսական այդ քաղաքականու-
թիւնը անգառնալի է —դրան վկայ են
պատմութիւնը եւ հէնց մեր 'օրերով
կատարուած իրողութիւնները—եւ նա
գործում է եւ գործադրում է օգտերի
եւ ցեղերի վերայ, ճակատագրական
զնացքով, տեղի եւ ժամանակի հա-
մեառ, անխտիր, անպայման :

Եւ հէնց այդ քաղաքականութիւնն
է կազմում ընդհանուր հայութիւնը
ապարտաբեցնող ներկայ իրողութեան
իմաստն ու ոգին եւ դրանով էլ պէտք
է զբաղուինք առաջնապէս : Անձնա-
ւորութիւնները, որքան էլ նրանք,
կրկնում ենք, արժանի լինին մեր ա-
տելութեանն ու հակադրութեան, ա-
ռանձին ուսանական վերջում, կոր-
ցընում են իրենց առաջին կարեւո-
րութիւնը, նրանք որոշ քաղաքակա-
նութեան, որոշ ուղղութեան ծառա-
յող գործիքներ են, ուրիշ ոչինչ :
Նրանք կարող են կորչել, նրանք
կարող են անհետանալ ասպարէզից,
բայց թողնելով իրենց տեղը աւելի
կամ նուազ կարողութեամբ օժտուած
նորերի : Նրանք, արուած խնդրին
մէջ, շարժական տարրերն են, հաս-
տատուներ, միայն ընդհանուր է, քա-
ղաքականութիւնն է, վերջապէս այն
անգառնալի եւ անկապարտանոց երե-
ւացող հպատակն է, որը զբւլ է իրեն
ուսանական ձարիգը, այն է՝ կլանել,
քաշել մանր ազգերը ուսանական ազ-
գութեան մէջ, տարաւոր պետութիւնը
վերածել համաւոր պետութեան,
ուրիշ խօսքերով, մանր ու խոշոր
ծովերից կազմել ուսանական ուղիները :

Ահա՛ խնդիրը, որով պէտք է զբա-
ղուինք մենք, հայերս, բայց որը
պէտք է լուծենք մենք, հայերս,
բայց որը պէտք է լուծենք արմատա-
կանապէս : Եկեղեցապետական կա-
ռուածների խնդիրը չէ՛ որ պէտք է
լուծենք, ո՛չ, լուծ հասկանալով : Այդ
խնդիրը ինքն էլ, որքան մեծ նշա-
նակութիւն, որքան մեծ ու կենսա-
կան կարեւորութիւն էլ արուի նրան,
նա ինքն էլ դառնում է պզտիկ, չըն-
չին եւ երկրորդական, հապա՛ նոյն
ինքը, ազգային գոյութեան խնդիրը,
ազգի լինելն ու չլինելը ուսանական
սահմանների մէջ : Այս է որ պէտք է
լուծենք :

Ռուսահայերը գտնուել են կոռուսեան
վաճակի մէջ—ահա բո՛ւն, ահա՛ իս-
կական խնդիրը :

Ինչպէս կարող են լուծել ուսա-
նայերը իրենց ազգային գոյութեան
խնդիրը : Բայց այդ մասին յաջոր-
դով, կասենք միայն, առ այժմ, որ
այդ խնդրի լուծման բանալին չէ
գտնում ուսանայաստանում, ուս-
սահայերի մէջ, այլ՝ Տաճկահայաստա-
նում, տաճկահայերի մէջ :

Հնայեակ խոշորութեան

ԱՆԲՈՆԱԲԱՐԵԼԻ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Պաղը այլ եւս ամեն ինչ վերջա-
նայութեամբ է. այս է գէթ մեր տե-
րական համոզումը : Վճռական ձեռ-
նարկներ երկաթեայ յարատեւ կամաց
արդիւնքն են. ահա՛, եկեղեցւոյ կոչ-
նակը չխորհրդաւոր զողանջելով մը՝
կարծես պաշտօնական դիրքը առած
քեզ հրաւէր կը կարգայ Հայ ժողո-
ւո՛ւրդ, զարթո՛ր վառնալարնակ հա-
յութիւն, անձնական ամեն ճղճի՛հա-
շիւներ պահ մը առաջնորդ քա՛նք իբրեւ
պարտաճանաչ հայ անհատ, փութա՛
քո առ ազգն ստանձնած պարտակա-
նութեան անխելք կատարմանը մէջ
խիստ ու անաչառ ըլլալ :

Օրեր կան, օրեր որք հասարակային
կենաց փոփոխման չըջանին մէջ՝ ժո-
ղովրդային բարքերու յեղաշրջման պա-
հուն իրենց նշանակելիութեամբը եւ
մեծագործութիւններով, ամբողջ դա-
րու մը ընթացքին կը համապատաս-
խանեն, եւ ահա՛ միշտ այս նկատու-
մանով է որ վաղուան օրն ալ, ոչ
նուազ նշանակելի պէտք է լինի իւր
սահմանափակ առումովը՝ գոնէ Վառ-
նացիին համար :

1903 Սեպտ. 21 Թուակամբ Վառ-
նայի Հայ գաղութին կենսագրական
պատմութեան մէջ, հուսկեան դասա-
ւորութեամբ երկրորդ տեղն պիտի զը-
րաւէ, միշտ առաջնութեան պատին
եւ իրաւունքը տալով սակայն ամի-
րայութեան տապալման նախնական
զօրութիւն քայլին : 82 ական թուա-
կաններին երբ մանուկն Պոլսկաբիւ,
զեռ այն ինչ ստրկութեան շղթաներն
թօթափած ազատութեան արշալոյսով
կը հրճուէր, Մովսէս մը՝ քաջալեր-
եալ ժողովրդեան ազգաբնակչական զգա-
ցունման, անկանգնելի անկէմը կը
փութացնէր չորպաճի-թաղականու-
թեան մը եւ հարուածը ուղղուած
չնշապի անոր սիրտը, առանց այլ եւ
այլի գիտին կը տապալէր զայն ան-
կենդան, անշուշտ զեռ կը լինէր ա-
նոնք աւետարանը զանգակ իրենց հա-
մար տիտը՝ սակայն ժողովրդեան հա-
մար ուրախութիւն քան չիւնները որոնց
կրկնութիւնն այժմ էլ կը վախճուի :

Տիար Մովսէս ամեն ջանք եւ զո-
հողութիւն երբէ՛ք չէ՛ զլացած իւր
ազգին՝ երբ ժողովրդեան վստահու-
թիւնը զայն ու եւ ազգ. պաշտօնի
զլուխ կոչած է. այս կը վկայէ իւր
30 ամեայ ազգ. կեանքը եւ իբրեւ
դրական ու հեռաւոր մարդ՝ շատերու
նման ազգային զրկանքին մէջ, իւր
անհատական շահերու գոհացում տա-
լու չափ երբէ՛ք չէ՛ ստորնացած, այս
կէտը կը խոստովանին նոյն իսկ իւր
անձնական հակառակորդներն :

Ճակատադրական ժամը այլ եւս
հնչած է, վարանման տեղի չիկայ :
Փութա՛նք Վառնացիներ, գիտնա՛ք հո՛ն
ուր՝ բացարձակ արդարութիւնը ան-
մաքուր ձեռքերու մէջ սրբապիղծ,
քեզ օգնութիւն կը կոչէ :

Հայ ժողովուրդ, այն ստոր խաղը
զոր մեր ընտրեալները կուզեն մեզ
խաղալ այնքան վրան բաց կերպով,

թոյլ չի տանք սակայն որ անոնք ի-
րենց հակամարդկային շահատակու-
թեանցը մէջ անարգել յառաջ ընթա-
նան : Հակիչի դերին մէջ աջալուրդ
ըլլանք, ուշի ուշով հետեւինք մեր
իրաւունքը բռնաբարողներուն մէն մի
քայլափոխին եւ զեղծման առաջին ե-
րեւումին՝ բողոքենք բարձրաձայն մեր
ուժին ներածին չափովը, ընդդիմա-
դիրներու ուժը զգացնենք մեզ սկզ-
բունք ընտրած հետամուտ ըլլանք ա-
մեն թափով արդարութեան յաղթա-
նակը ապահովել :

Իսկ դուք ազգադուրժ վատե՛ր,
ի՛նչպէս պիտի յանգնիք առանց խղ-
ճահարուելու, ազգ. ա՛յդ նուիրական
հաստատութեան, վարժարանին սիմէն
ներս սողոսկել, դուք որ երբեմն ա-
նոր խաղաղ շինութեան արգելք հան-
դիսանալու դիտումով, յուզայական
բոլոր ստորին միջոց ներելի համարե-
լով մինչեւ նախարարութեան դուռը
գիմնելք, ու կայէնի գիրկէն գիւշային
ժպիտ ի շուրթին ձեռ սխրագործու-
թիւնները վայելելու անուրակելի ազ-
գասպանութիւնը յանձն առիք, վա-
տե՛ր : Սակայն կրկին Տիար Մովսէսի
կարող ձեռքն էր որ յաջողեցաւ վայր-
կենապէս խորտակել դաւաճանական
ամեն մեքենայութիւն ամօթահար թող-
լով ազգ. հարցերով իրենց անհատա-
կան հաշիւներն կարգադրել ուղղով՝
հայութեան արատ եւ մարդկութեան
անարգանք բերող այդ ողորմելիները :

Եւ դեռ քաղութիւն կուենանայ այդ
պիտիւնները ժողովրդեան մէջ մտնել, ու
յանուն ազգ. շահերի, հասարակու-
թեան համար զոհել ու զոհուել քա-
րուել, իրենք, որ զոհաբերու-
թեան վերայ երբէ՛ք գաղափար մը
չունին եւ չի պիտի ունենան. ուրիշ
հաշտոյն ապրել եւ եր նմանաց թիշ-
ուառութեանցը մէջ իրենց երջանկու-
թիւնը որոնող այդ մարդաճեւաղները,
այսօր կը ձգնին ժողովուրդը խաբել,
անոր աչքին ոսկի փոշիներ ցանկելով,
անպիտանալով սակայն թէ՛ նա, ժո-
ղովուրդը գիտակցութեան ուղի ա-
տեճանին հասած կարող է դանազանի
զորքը ու գործիչները :

Պատգամաւորութեան թեկնածուե-
րէն միոյն ընտրութիւնը յաջողցնելու
նպատակաւ ձեռք առնուած արտակարգ
միջոցներն, եւ այն տնտեսական զարգ-
ջութիւնը, որուն մէջ իրաւամբ կը
փայլի Յեղ. որոշ կուսակցութեան մը
անորոշ ներկայացուցիչը իւր մօծ ու
փոքր արբանեակներով, պաշտօնա-
կան մարմիններ իւրեանց անպաշտօն
հետեւորդներով, ամենքն ալ անհամ-
բեր ընտրութեան ելքին սպասող : Ելք
մը, որ գուցէ իրենց անկումը արագէ-
անկում մը որ կը թուի անխուսա-
փելի ըլլալ եւ միանգամայն անբու-
ժելի :

Ձեռ ուղեւ հոս պատգամաւորու-
թեան զոյգ մը թեկնածուներու կեն-
սագրական յօրինել, որոնցմէ մին
Տիար Մովսէսն է, արդէն քաջ ծա-
նօթ իւր ոչ-հեռու տղային անցեալ
գործունէութեամբը եւ ընդունուած
ժողովուրդէն միշտ համակրական ցոյ-
ցերով : Իսկ միւսը նորաբոյս սկսնակ
մը՝ առանց զոյգն ինչ անցեալի եւ աշ-
խարհի ամբողջ մասնաւորութիւնն օգուտ քա-
ղել ուղեւով ժամանալին թափններով
կերպէ՛զ անաղաղաբէ իւր... զլուրը,
ինչպէս նաեւ լանջախաղով մը կուրծք
իր կ'զճաւորութեան տիպար եւ քու-
սքանաւորին :

Վառնացիներ, անձնական ամեն
նկատում յետադաւելով ազգային բարձր
շահերէ, վեհանձնութիւնը ունենանք
արդարութեան եւ բանականութեան
ուղիէն ընդամալու, գէթ սոյնաման
պարագայից մէջ : Անհատական հին

հաշիւները ուսնակով ընելով խղճի
ձայնին միմիայն անստե՛ք, իբրեւ յա-
ռաջագէ՛մ մարդկութեան հնադոյն մի
հատուածը, լուսաւորութեան առջեւ
մեզ արգարացնելու չափ կորով եւ
ուղղամտութիւն ունենանք. ու այս
սկզբունքով տոգորեալ գիտնանք մեր
ձայնը տալ անոր որը պիտի կրնայ
մեր ցանկութեան բաւարարութիւն
տալ, արժանաւորն ընտրել մեր պար-
տականութիւնն է :

Առաջնորդութեան մը հաստատման
բազմապիսի բարդութիւններն ի նկատի
առնելով, կուենք մեր քանտիտատի ձեռն-
հասութիւնը. սակայն ինչո՞ւ վարանել
եւ նորանոր փորձերով ժամաւաճառ
ըլլալ, ունինք արդէն բազմիցս փոր-
ճուած եւ մեր փափաքանազ միշտ
լիառատ բաւարարութիւն տուող անձ-
նաւորութիւն մը՝ ժողովրդեան դաւա-
կը պատգամաւորութեան միակ յարմա-
րագոյնն եւ համակրելին Մովսէսն, որ
անշուշտ պոլսկաբնակցոց օգտակար
ըլլալու ոգիէն մղեալ, պիտի գիտնայ
Վառնացիին մասնաւորապէս, պուլկա-
բնակցոց ընդհանրապէս չանքն ի նկա-
տի առնելով, իւր հեղինակաւոր ձայնը
տալ այս կամ՝ այն՝ եկեղեցականին
որ մօտեկ ապագային պիտի գայ Պուլ-
կաբիոյ առաջնորդութեան արժեքն բազ-
մի :

Այո՛, ամենք մեր քուէն, տանք զա՛յն,
սակայն արժանաւորին :

ԱՆՈՒՍԵՐ

ԿՈՒՐԻՍՏԻԱՆԻ ԽՆԴԻՐ Ի ԳՍՇԻԷ

Ռուսիոյ մէջ ծանօթ հայ կալուած-
ներու գրաւման դէմ, վեհ. կաթողի-
կոսի եւ բոլոր եկեղեցականաց զօրեղ
ու հաստատամիտ ը՛գգիմութեանք կեր-
պով մը նեցուկ ըլլալու համար, ամ-
սոյս 15/ին Ս. Աստուածածնայ եկեղե-
ցին մէջ եղած դուրսաբերման արդիւն-
քը հաղորդած էի անցեալ թղթակցու-
թեամբս կցելով նաեւ հետագրի պատ-
ճէնն :

Սյս ծանրակշիռ խնդիրը՝ որ անբու-
ժելի վէրք մը եղաւ՝ ամենուս սրտին
վրայ խորապէս բացուած, օր ըստ օրէ
նորանոր աղետալի համեմատութիւն-
ներ կառնէ :

Իր կրօնքը ու լեզուն, ազգային
գոյութեան միակ պայմանը, պաշտ-
պանելու գիտակ հայու ոգրումը գա-
զաքի թուաւոր սուրբինն սոսկ կը
մարտիրոսանայ :

Եկեղեցական դարաւոր իրաւունք-
ներու վերին անաղական կղերք իր
շուրթական պաշտօնը անթերի կատա-
րելու թափին մէջ նշաւակ կը դառ-
նայ տար ուս կալիցիւնի մը նախա-
տինքներուն :

Յուզումը ինչպէս ամեն հայաբնակ
կեդրոններ՝ նոյնպէս հոս ծայրագոյն
աստիճանի մը հասած է : Եզրպատական
«անամալին» (նէ վաղիֆէմ) հաղիւ ինչ
կը տեսնուի խոնաւ աղտեղութիւննե-
րէ գոյութիւն առած քանի մը մողուն-
ներու բերնին մէջ, չըլլան բարով :

Ինչպէս ըսի, եզրպատարական հայը
իր սահմանէր ոգին երբէք չէր ցու-
ցադրած այնչափ նկատելի կերպով
որչափ այժմ :

Երէկ 20 սեպտեմբեր Բ. գումարում
մըն ալ տեղի ունեցաւ հոս եկեղեցա-
կան իշխանութեան հրաւէրով՝ այս
գումարումին ալ նպատակը նոյնն էր՝
ձեռք առնուելիք միջոցը միայն տար-
բեր :

Առթիւ պարտք կը դնէ յիշատակել
թէ մեր ծիրուսադարձ Սրբազանը ար-
տասովոր աշխուժութեամբ փառած է
այս կենսական խնդրոյն ի մ.ծ գոհու-
նակութիւն իր սոսկի զգուհ հոտին :

Գումարումն ի վայր՝ Ս. Աստուածածանայ եկեղեցին՝ խոնարհած վշահարժողովուրդը, ունկնդիր եղաւ Քրիստոսի սրտածմելի քարոզին, որուն ատարածը կը կազմէր Ռուսիային հասնող այս շարժումն տնուր լուծերը։ Աւելորդ է մասեր բերել անկէ, ներքին վշտառիթ է եւ ամեն հայու սրտէն միեւնոյն հառաչը կը թռչնէ։ Այս երկրորդ միջոցը որուն գիտում եղաւ, բողոքական խնդարի մը մատուցման միջոցն էր, ուղղակի Ն. Վեհ. Նիքոլա Բ. Ռուսիոյ կայսեր, տեղւոյս ուսուցչականատան միջոցաւ։

Ժամերգութիւնէն վերջ հոծ բազմութեան առջեւ կարգադրեցաւ սոյն բողոքական խնդարը, որուն պատուակութեան եւ ուղոյն համեմատ գտնուեցան բոլոր ներկաները եւ ստորագրութիւններով ծածկեցին անոր Գաղ. բնագիրը որմէ յետոյ պատգամաւորի մը ձեռքով Աղեքսանդրիա ղըրկուեցաւ հոն ալ ստորագրուելու համար։

Վերջին պահուն կը տեղեկանամ թէ այս աթիւ հակումներ ալ պիտի կատարուին տեղին եւ Աղեքսանդրիոյ եկեղեցիներուն մէջ, կրօնաւէր ժողովրդի մը վերջին ապաւնն է այս, որ աւա՛ղ չէ զօրած սրբել 19 դարիւրէ ի վեր հայուն արտասուելից աչքերը։

ԳԻՄԱԿ

Գրահիւրէ 21 սեպտ.

Մ. ԽՄԲ. — Բողոքաբեր պատճէնը որ մեզ ղըրկուած է, յաջորդ շարքիւ պիտի հրատարակենք բանաւոր նկատումով մը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Տէր Խմբագիր,

Կը խնդրեմ որ, այս վերջին անգամուն համար ալ, կամակատարութիւնը ունենաք ձեր թերթին մէջ անկիւն մը տալու, հանրութիւնը ինքնին անտարբեր ձեռք անձնական բաւական ճշգրիտ խնդիր մը։

Ըսեք էի նամակով մը, թէ Բուս-չուքի ՀԱՅԱՍՏԱՆԻ Երանային հրատարակելու համար Տ. Ճգնաւորեանի հետ Կունեցած ընկերակցութիւնէս բաժնուած եմ, ու թերթին պարտական մնացած 1200-1400 Փրանքի վճարումն ալ կը վիճակի Տ. Ճգնաւորեանի, քանի որ թերթը կը շարունակէ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ Երանային համար Տ. Ճգնաւորեանի համահաւասար իրաւունքներով ընկեր եղած ըլլալուս, եւ մեր այս ընկերակցութիւնը մեր երկուքին ստորագրութիւնը կրող օրինաւոր պայմանագրութեան մը մէջ ալ նշանակուած ըլլալուն, իմ անբընաւորելի իրաւունքս էր սպասել, որ հրաժարագրք իմ բաժնումս Տ. Ճգնաւորեանի ՀԱՅԱՍՏԱՆԻ-ի մէջ իմացնէր։

Տ. Ճգնաւորեան զուրկ գտնուեցաւ բաժնուող ընկերի մը նկատմամբ իրաւունքի ու ազնուութեան այս օրինաւոր պահանջը ըմբռնելու կարողութիւնէն։

Այն ատեն, սուրբութեամբ եղայ ձեր հիւրընկալութեան գիտում ընել, ու երկու տողով իմ բաժնումս ու ՀԱՅԱՍՏԱՆԻ-ի հետ ալ կապ չունենալու իմացնէր։

Տ. Ճգնաւորեան կը մոռնայ որ, բաժնուող ընկերի մը նկատմամբ ամէն կերպով դատաւարտելի իր այդ զլա-ցումն էր որ զին օտարի ձեռք գի-մում ընել, ու կենէ Հայաստանի վերջին շարքի օրումն թուով կըսէ թէ «ոչ ոք ինծի սանդիմ տուած չըլ-

լալով, առելորդ է որ ես ու եւ պարտ-քի մը պատասխանատու ըլլալու մտա-հոգութիւնը ունենամ»։

Ուրիշ բառ չը գործածելու համար, պիտի ըսեմ թէ, ստուգապէս, Տ. Ճգնաւորեան խնդարի է։

Հայաստանը հրատարակելու համար, Տ. Ճգնաւորեան ու ես, մեր խմբագ-րած ու ստորագրած պայմանագրու-թեան մէջ, զխնդարար սա պայմա-նակէտը գրեւ էինք։ «Հայաստանի երկուքին սեփականութիւնն է հաւա-սարակչս, ու զայն կը հրատարակենք շահն քեզմանս կողմի համահաւա-սար քաժիկներով։

Ահա Տ. Ճգնաւորեանի ու իմ ստո-րագրութիւնն կրող այս շատ օրոշ, շատ բացարձակ պայմանակէտին գո-յութեամբն էր որ, օրինաւորաբար, ինքզինքս կէս առ կէս մասնակից կը գտնէի Հայաստանի համար եղած շուր ծախքերուն ալ։

Տ. Ճգնաւորեան խնդարի է, ըսի, եթէ, անպատկառութիւնը կը տանի մինչեւ իր յայտնի ու ձեռագիր ստո-րագրութիւնը կրող պայմանագրու-թեան մը այս բացորոշ պայմանակէտը ուրանալու աստիճանին։

Աւելին կայ ոչ միայն, կէս առ կէս, ինքզինքս մասնակից կըզայի «Հա-յաստանի» համար եղած բոլոր ծախ-քերուն, ալ, ճշգրիտ, Տ. Ճգնաւորե-անի հետ ունեցած ընկերակցութիւնէս բաժնուելուս տրոփեմն պատճառը, թերթին հետգնեմն աւելցող պարտ-քերու այդ հսկայ գումարը եղած է, որուն վճարումն մէջ, ըստ մեր պայ-մանագրութեան, «ես անձնապէս կէս առ կէս պատասխանատու էի»։

1200-1400 Փրանքի փոխ տուողները, եթէ այդ գումարները «Հայաստանի» համար կուտային, ուրեմն կէս մըն ալ ինծի համար կուտային, քանի որ «Հայաստանի» կէսն տըրը ես էի։

Տարբեր խնդիր է, եթէ Տ. Ճգնա-ւորեան կարծեց թէ, այդ զրամները, որոնք արուած էին հանրային օգտա-կարութիւն մը ունենալու խօսքով տուող թերթի մը յաւաքիմութեան, իր աղուոր սեւ աչքերուն սիրտն կը թափուէին, որպէսզի հէզը միջոց ու-նենար Մօմթէ-Բաղդադէ ու Մօմթէ-Բաղդադէ իր քաջած կարօտը աստիճան մը մեղ-մայնելու։

Գործին այս կերպարանք առած ըլ-լալը հաստատուելով էր որ քաջուրի մը տարբերեցի, տեսնելով որ թերթին (հե-տեւապէս կէս մը իմ անուին) առ-նուած զրամները բոլորովին տարբեր միջոցներու կը գործածուէին, ու բա-րսիրական արամագրութիւններ ան-խըղճօրէն կը շահագործուէին։

Այսպէսով, ինքզինքս կազատէի մօտակայ անպատկառութեան մը անխու-սափելի զահալիմութիւնէ։

Տ. Ճգնաւորեան, որ այժմ կըսէ թէ ինծի ոչ ոք սանդիմ տուած չըլլալով, ես ու եւ պարտքի բնաւ պատասխա-նատուն չեմ, (թէեւ, ինչպէս ցոյց տուի, քանի որ «սանդիմները» «Հա-յաստանի» կը տրուէին, ինծի ալ կը տրուէին, նկատելով որ, ըստ մեր երկուքին ստորագրութիւնը կրող օ-րինաւոր պայմանագրութեան, Հայա-ստանի կէս տէրն ալ ես էի) ընկերու-թեան քաջուրեւ օրս, շատ լաւ, շատ ուժով կերպով արժեցող, ուրիշներու ներկայութեան, թերթին պարտքերուն մէջ իմ պատասխանատուութիւնս, ու-ղեց օգուտ քաղել իր ձեռքը ունեցած մեր պայմանագրութեան օրինակէն, ու նոյն խել, պահ մը կամէութիւնը ու-նեցաւ ուրիշի սեփականութիւնը եզող ու իմ անուին տրուած թերթին ար-պագրական տառերը, այդ պարտքի ի հաշիւ, վար դնել։

Ամբողջ Բուսչուք գիտէ այս բանը։ Այժմ սակայն, Տ. Ճգնաւորեան կու-րանայ սեփականութեան այս դէպքը, որը պատուաւոր վաճառականներու աչքին, թերթին պարտքին մասին ու-նեցած կէս առ կէս պատասխանա-տուութեանն ի հաշիւ կարողարացնէր, կուրանայ մեր պայմանակէտը, ու պարտքերու մէջ ինծի պատասխանա-տուութեանն ու եւ իմ կը զրանայ։

Իմ նպատակս էր, Հայաստանի Տ. Ճգնաւորեանի թողով, թերթին ա-նուանով այս ու այն անձնաւորու-թիւններէ փոխ առնուած ու բոլորու-թեան զրամները վճարելու մասին, իր Հայաստանի կէս տէրը ունեցած պա-տասխանատուութիւնէս ազատել։

Տ. Ճգնաւորեան, հակառակ ստո-րագրեալ բնագիրներ խնդարեւելու իր պաղարին անպատկառութեան, ինծի իրական ծառայութիւն մը կը մատուցանէ սակայն, ըսելով թէ այդ զրամները ոչ թէ Հայաստանի (ու հե-տեւապէս կէս մըն ալ ինծի) կը տըր-ուէին, ալ իր անունին իսկապէս, անհատապէս։

Այդպէսով անաղարտ կը ճողորպիմ անխուսափելի անպատկառութեան մը տիպուր իրականութիւնէն, որու յայտ-նութեան ժամանակը հեռու ըլլալու չէ։

Տ. ԼԵՄԱՆՍՆ
ՎԱՍԻՆԱ

ՀԵՐՔՈՒՄ

Հրապարակաւ կուգամ յայտարա-րել թէ 549 թիւ «Շարժում»ի մէջ Մ. Սէթեանի ստորագրութեամբ գրուած յօդուածը կարգաւոր զարմացայ, իբր թէ Միսաք Մաղաքեան անունով անձը գրպանէս 159 Փրանքից բօղբա մը գողցած ու պարտատիրոջ յանձնելով բռնուած է եղեր։

Այժմ իմ կողմանէ կը խնդրուի պատ-խմարագրութիւնէդ սոյն երկուողս հրա-տարակել որով Սէթեանի զրպարտու-թիւնը հրապարակուի։ Այո՛, 230 Փր-բօղբա մը կորսնցուցած եմ բայց վե-րոյնչեալ անձի մասին չեմ կրնար ը-սել թէ գողցած է, ուստի Մ. Սէթե-անի իմ մասին գրութիւնը կէտ առ կէտ սուտ է։

ԹԱԴԵՆՈՍ ՄԻՆԱՐԵՃԵԱՆ
Պուրէշ 10 սեպտ.
Օրեցալ մըն ալ «Շարժում»ի ղըր-կուած է։

Բարոյականի տէր ամեն անձ զըզ-ուանքով կարգաց «Շարժում»ի 549րդ թիւին մէջ Սէթեանի ստորագրութեամբ գրուած որով իր անարարականու-թիւնը կուզէր ծածկել իմ եւ ուրիշ-ներու ուղղած զրպարտութիւններով։ Առանց փաստի եւ ապացոյցի հրա-տարակուած զրպարտութիւններու պա-տասխանել աւելորդ է, ուստի կը սպա-սենք որ փաւտեր ցոյց տայ։

Մենք չէինք ըսած թէ Սեմաքեան ընտանիքը անբարոյականութեան մէջ ինկած է. ալ ըսած էինք եւ կը կրկ-նենք թէ Սեմաքեան ընտանիքի պա-տիւր վտանգի մէջ է եթէ այդ վաղա-ժամօք անբարոյական Սէթեանը սու-նէն դուրս չը վընտէ։

Այդ հրէջը կը կարծէ թէ խնամակա-լութեան գործին մէջ իր հետ պատուա-ւոր անձի գտնուելը իր անպատիւ չըլլալը կապաղաւանէ։ Իր յիշած այդ ընկերները՝ որ զբաղուած թիւնը ունե-ցած են անգիտակցաբար զանի իրենց քով առնելու, հայերէն չգիտնալով,

չեն խնայած թէ արտաքինմանի հայ թերթերուն մէջ ո՛ր աստիճանի իրա-ւամբ խայտառակուած է այդ հրէջը. միայն պ. Պիպէնճեանը պէտք է կարդա-ց. ըլլայ անոր սիրագործութիւնները զորս այս առթիւ չեմ ուզեր յիշել։

Մեզ եւ մեր հետ առնուած սա զար-մանայի եւ ծիծաղելի կը թուի թէ գրեթէ տարի մը առաջ ինչպէս «Իրա-ւունք» նոյնպէս եւ «Շարժում»ի մէջ վարդօյն կողմէ չափազանցօրէն խայ-տառակուած այդ Սէթեան կողմող կատղած հրէջը այսօր նոյն «Շարժում» թերթի մէջ ինչպէս կընդունուի որ անոր ասոր դէմ գրադարտութիւններ եւ հայտնութիւններ տեղացնէ. կրկնէնք հոս անցեալ տարի Տէր Ստեփան հօր ըսածը «նման գնման օրէն», կամ թէ Սէթեանի նման հրէջի մը գրածը վար-դօն կը հրաբերկալէ իր թերթին մէջ միայն անոր համար, որ հայտնու-թիւններ կը պարունակէ «Իրաւունք»ի ու իր խմբագրին դիմ։

Ծաւալի՛ անկում։

ՄԻՍԱԿ ՄԱՂԱՔԵԱՆ
Պուրէշ, 11 Սեպտ.

ԱԶԳԱՅԻՆ

Ս. ԷՋՄԻԱՄՆԵՆ հասած գրու-թեանց նախընթաց, Երեւանի նահան-գապետին հրամանագրով զաւառա-պետը գաղաքներով էլ միմիայն վանքը չըջապատած է ու բուն մայր վանքին կալուածներուն ու գանձին յանձնուած պահանջած. չըջակալի հայ ժողովուր-դը ուխտագնացութեան պատրուակաւ վանքին մէջ հաւաքուած է ստուար բազմութեամբ։ Թանգարանի, գան-ձարանի եւ ուրիշ տեղերու բանալի-ները միարանութիւնը յանձնել է Վեհ. Կաթողիկոսին։

Այս ձգտուած գրութեան յաջորդող դէպքերը դեռ մեզ անձանօք են, միայն թէ Տ. Սուքիաս Արք. Պարզեանց Ս. Էջմիածնէ Երեւան գացած է նահան-գապետին մէջ գրութեան պատասխա-նելու համար։

ՊԱՏՐԻԱՐԿԱՆԸ որոշած է Սու-լիմայի Տ. Խաչատուր քահանայն Պա-պատաղ փոխադրել, իսկ Ինչե-պուրի Տ. Յովնանէս քահանայն Սուլիմայ։

ՊԱՏՐԻԱՐԿ Թերթերը խորին ցաւով կը ծանուցանեն մահը ակնաւոր բժիշկ Տօք. ՄԻԿԱՅԷԼ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆԻ, որ 69 տարեկան էր եւ եւրոպական գի-տական չըջանականութեան մէջ «Բրօք-սօր» ճանչցուած ու յարգուած է։

Պոլսոյ բժշկական վարժարանին մէջ ներքին անտարանութեան ուսուցչա-պետ եղած էր չուրջ 30 տարի, իրեն օգնական ունենալով Վահան փաշա Մանուէլեան. Կապ. բժշկական Ժո-ղովին նախագահ եղած է. Օսմանիյէ. Մէճիտիէ եւ Լիւզաքի նշաններէն զատ բաւական թուով եւրոպական չքաղը-բաններու արժանացած է իւր հմուտ-թեան շնորհիւ։ Վարժարաններու, աղբատ սինամի եւ որբանոցի առատո-րէն նպատակած է, մասնաւորապէս Ազգ. Հիւանդանոցին։

Վ Ր Ի Պ Ա Կ

ՏՈՂ	ՍԽԱԼ	ՌԻԶԻԶ
1	Ձեզ չէ	Ձեզ է
4	գերատանին	սեփականին
9	որպէս զի	որպէս զի
13	չարուած	լարուած
19	ձգտումները	զգացումները
23	վայելուչ	վայելուչ
29	հակերկրութիւնն	համակերկրութիւնն
31	որոտաբերով	սրտատրոփ
46	քննելու	քննելու

Ի Ն Թ Ի Խ Ա Պ

Երեւոյն Սփիւստա թէճէմիւ
օլըմասը մուգարրէր օլան Պատ-
գամաւորական Ժողովա իշխիրաք
իթմէ իշխն վառնատան կէօնտէ-
րիլէճէք մէպուսըն (Պատգամաւոր)
ինթիխապր եարըն իճրա օլընա-
ճագ տըր: Վառնատա մուգիմ օ.
լուպ, 25 եաշընը իքմալ իտէն հէր
պիր էրմէնի րէյ վէրմէք հագգը-
նա հայիզ օլտըղընտան, եարըն
սաաթ 12 է գատար քիլիսէյէ կի-
տուպ քէնտի րէյիին շախսէն վէր-
մէլի տիր:

Իզթիտարը վէ թէճրիւպէքեար-
լըղը իլէ մարուֆ Մ. Յակոբ Մափ.
եանըն մէպուս ինթիխապ օլըն-
մասը միլլէթին մէնֆաաթընա էն
միւնասիպ օլաճաղընը պուստան
կվէլ չէնթ տէֆալար կէօսթէր-
միշիզ:

Էթմէտէ իսէ պազըլարը՝ միլլէ-
թին մէնֆաաթընտան զիյատէ
քէնտի շախսի մէնֆաաթըլարը,
էսկի խուսուսէթլէրի իշխն տիկէր
պիր շախսըն ինթիխապընա չա-
լըմագտա տըր: Պուսլար հէր
պիր մէշղուլիլէթիին պըրա-
գուպ, հաֆթալարտան պէրու մա.
հէլլէտէն մահէլլէյէ, էվտէն էվէ
կիտէրէք սաֆտէրուլարը գան.
տըրմագ իշխն վառնատա տըղարը
թէֆրիգասը չըղարմագտա վէ էն-
վաի տիւպլէրիթտէ պուլընմագտա
տըրլար: Պուստան մատաա՝ տի-
կէր կէօնա էնպաի հիլէքեարըղ-
լարա տախի իրթիքեապ իտիլտի.
կիին սօն իքի սաաթ զարֆընտա
իտարէխանէմիզէ կէլուպ րէվալէթ
իտէն էշխասըն մըգտարը պիր գաշ
տիւզինայա պալիզ օլտու:

Պու կիպիլէրին հալլէրինէ թէէ-
սիւֆիմլզի պէյան իտուպ, միլ-
լէթտաշարըմըղա «կէօզիւնիւզիւ
աշըն, րէյ վէրմէք մուգատտէս
հագգընըղը տիւպլէրիլէրէ ֆէտա
էթմէլիլիզ» տէմէլէ իյֆաի վա.
զիֆէ իթմիշ օլուրըզ:

Մէթմէպէր զէվաթըն թէք
լիֆի իւզրէ Գեւր. Պատր. ֆոխա.
նորդ հայր թարաֆընտան եարըն-
քի ինթիխապ իշխն մէթմուպլար
տաղըթմայա գօնթրօլ թային օ.
լընմըլ ըտըմ:

Հիլէքեարըղըն էօնիւնիւ ալ-
մագ իշխն հէր պիր զայրէթիմ
խիւաֆընա օլարագ՝ Տէր Սարգի-
սին էնթրիգասընա թահէմիւլ ի.
տէմէյուպ, կէօզիւմ էօնիւնտէ եա-
լան շահատէթլէր, պիլտիկիին ին-
քետր իթմէք կիպի խապասէթլէր
վուգու պուլմամագ իշխն իսթիֆա
էթմէկէ մէպուր օլտըղըմը ալէնէն
պէյան իտէրիմ:

Մ. Համբարձումեան

Ի Խ Թ Ա Ր

Էլան կազէթա պէտէլինի
հօտէմէ իշ օլան միւրիւվէթու ա-
պօնէլէրիմիզ՝ սէնէի հալիէնին տօ-
գուզընը ալընտա պուլընտըղըմը.
զը տէր խաթրր իտէրէք, պիւա
թէէլիլի պօրճարընը էօտէմէլի
տիրլէր:

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Ոռոզիլլի հալխապէր

Տնէվնիք կազէթասընտա օգուսն.
մուշ տըր:

ՆէվսիՄաթէթոնիատա վէ Մաթէթո
նիւնըն ճէնուպ թարաֆընտա վէ
Քրաթօպանըն էթրաֆընտա եէ-
նիտէն պաշ կէօսթէրիլէն իսեան
Սփիւս տիպլոմաթըրընը թէլաշա
տիւշիւտի. իսեան Պուկարիա
սինթընա եալըրագճա, պէհէմա-
հալ թիւրքեանըն վէ Պուկարիա
նըն մահարէպէյէ կիրիշէճէլէրի
էֆքեարը թաափիպ էթմէքտէ տիր-
լէր:

Մահը հալին 14իւնի վէ 15
իւնի կիճէլէրի պիւթիւն Բիրինի
գագասը ահալիսի տախիլէր էլէ պիր-
լէշտիլէր. թէլէկրաֆ գաթ օլուսն-
մուշ տըր. Պաշէվոյա վէ Մէխօ.
միայա եագըն տախիլ իլէ թիւրք
ասքէրի պէնիւնտէ շէտիտ մուհա-
րէպէ օլույօշ. պիր թագրմ քէօյ.
լիւլէր գատըլլար վէ չօճուզլար
թիւրքլէր թարաֆընտան վահշիա-
նէ սուրէթտէ գաթլ օլուսնտուլար
բէք չօզլարը տաղարա ֆիրար
իթմէքտէ տիրլէր. պու թէլէկրա
ֆըմը իշար իթմիկիմ տըքքատա
տախիլէր Պաշէվօ իւզէրինէ հիւնիւմ
էթտիլէր թիւրք. տաքէրի տախիլ.
րին շիտտէթիլէն թահաթմիւլ ի-
տէմէյուպ գաշտըլար. Մէթմիւ
գաապասը քեամիլէն խարապ օ.
լուպ ահալիսի տախի թէլէֆ օլ-
մուշ տըր:

Մուրճէֆին, կէրասիմօլըն
վէ Բօթարիլէվին պիրլէշմիշ օլան
չէթլէլէր՝ Քրաթօպայա եագըն
պիր քաշ քէօյտէ գանըլ մուհա-
րէպէլէր վուգու պուլտը, իքի քէօյ
ահալիսի չէթլէլէրէ իմտատա եէ-
թիշտիլէր. թիւրք տաքէրի պէօ-
յիւք գալաթ վէրուպ ֆիրար իթ.
տիրլէր:

Չէթլէլէրէ իմտատա կիտէն քէօյ-
լիւլէրին հանէլէրի խարապ օլտու.
Բիրինի քէօյիւն եագընլարըն-
տա պիր մահարէպէտէ թիւրք
տաքէրին պին պաշըսը վուրուլուպ
թէլէֆ օլմըլ տըր:

Րուս վէ Աւստրիա տէվլէթ.
լէրի թարաֆընտան թէրթիպ օ
լընմըլ օլան մահուտ Մաթէթոնիա
խալահաթ ճէտվէլինի իճրա իթմէք
վազիֆէսի իլէ թէշըլի օլընան գօ.
միսիօնա հէր միլլէթտէն պիրէր
ազա թային օլընմասընտան տօ.

լայը Սըրպլար վէ Բուսէլէր բէք
մէմուսն գալմըլ տըրլար. ագսիօ.
լարագ Պուկարլար վէ Բուսլար
քէնտի միլլէթտաշարընտան պի-
րէր քիշի թային օլընտըղը իշխն
հիտտէթ տուլմագաա տըրլար:

Էֆքեարը աճիգանէմիզէ իշպու
գօմիսիօն տախի վազըթ պազան-
մագ իշխն պիր վասիթա օլուպ
խալահաթըն իճրասընա հիշ պիր
թէմինաթ վէրէմէլէճէք տիր:

Թիւրքիտա Սըրպ վէ Բու-
մէն միլլէթլէր շիմտիէ գատար
րէմէն թանըլմամըլ իքէն, շու-
սըրա թանըլմագ իշխն վատլար
օլընլօր. Մաթէթոնիատա պու-
լընան պիր ափուճ գուցօ ուլահ.
լալ միլլէթ ատտ իթմէքտէն
մագսէտ Պուկարլարա պիր րա.
գիպ տահա չըգաթմագ տըր:

Ո Ը Ր Պ Ի Ա

Պիւկարիւս, 16 սեպ.

Նիշտէ տէրտէսթ օլուսն գա-
պիլլէրին մահարէքմէսի խիթամ
պուլտու, Ն-վաքըվիշ վէ Լազա-
րէվիշ եիւզ պաշըլար սիլքի աւ.
քէրիէտէն իարտ վէ իքիշէր սէնէ
մահպուսա մահքիւմ օլտուլար,
Միւլադիմ Տրուտարէվիշ պիր սէնէ,
Լուկուսթիւքի վէ Բրօթիշ օնար
այ, թօտօրօվիշ, Ճօլճէվիշ վէ
Աւտրիշ սէքիլէր այ, պին պաշ-
վէլիշիօվիշ վէ եիւզ պաշը Լօն.
քիւլիշ պիրէր այ վէ պաքը գա-
լան գապիլլէր տէօրտէր այ մահ
պուսիլլէթ մահքիւմ օլտուլար:

Ր Ո Ւ Ս Ի Ա

Ձար խարիճիէ նազըրը Գօնթ
Լաւստօլ ֆ իլէ պէյս պէր Սեպտ.
17տէ վիէննայա եէթիշտի. Սթա.
սիօնտա իմէրաթօր Յրանց Եօ-
զէֆ, արշիտիլէր վէ հիւքիւմէ-
թին պէօյիւք մէմուլարը Ձալ
գարըլաւտըլար, իքի հիւքիւմտաշ-
լար եէքտիկէրինի տէրաղուշ իթ.
տիրլէր: Հայիլին հուրալարը իլէ իքի
հիւքիւմտալար Ենէպրուսն կիթ-
տիրլէր: Ձիյաֆէթտէ իմէրաթօր.
լարլէ իքի տէօվլէթին խարիճիէ
նազըրլարը րուս էլիշի վէ սայիլ
զէվաթը քիւրամ հազըր պուլընտը-
լար իսէտէ, տիկէր տէօվլէթլէրէ
մէնսուպ հիշ պիր քիմսէ պու-
լընմամըլ տըր:

ԵՌԻՆԱՆԻՈՏԱՆ

Աթիւստան Յրանիֆոնդրէր
Յաշրուկա իխպարաթա նազա-
րէն Ալպանիստա խաֆի պիր շի-
րէթ մէվճուտ օլուպ, էֆքեարլարը
իսեանա գալըրշմագ տըր. շի-
րէթտէ տախիլ օլան ազալարըն
նիլէթլէրի, Ալպանիատա խիւ-
թիւն պիր վալի թահլմնտա օլա-
րագ Օթօնօմի էլտէ իթմէք, պատէ-
հու իլէրուտէ Երուանիստան իլէ
պիրլէշմէք:

Երուանիստան վէ կաթօլիկ ալ-

պանիալըլար կէրշիլ պիր վագըթ
պիրպիրլէրէնէ հասիմ իտիլի իսէ
վաթանլարընը խեւասը իշխն պու-
ղըտտիլէթ միւնտէֆի իտէրէք
պիրլէշիլէր, հաթթա իսլամ Ալ-
պանիալըլարտան չըլարը իշպու-
շիլքէթին էֆքեարընա թաքվիլէթ
վէրմէքտէ տիրլէր:

Պու իսեանա թէշվիք իտէն նի-
ճէ սէնէլէրտէն պէրու մէվճուտ
օլան ինքէրնախօնալ հիւրիւրիէ.
Թի Ալպանիա նամ շիլքէթին ա-
զալարը օլուպ հաթթա բէք չօթ
մէպաղ եէտլէրինտէ տախի մէվ-
ճուտ տըր:

ԹԱՏՐՈՆ ՍԱԷՏԻՆԵՆԻԷ

Այս գիշեր Նատէթտա Հայ դերա-
սանական խոմըր պիտի ներկայացնէ
ՎՐՈԺԱՌՈՒ ԱՐԱՐԱՅԻՆ Ճիւղխաղ 5
արար, ԵՐԿՈՒ ՄՈՒՐԱՑԻՆԵՐԸ կա-
տակախոն թատերախաղ 3 արար,
Երգեր եւ պարեր Օր. Քաթինայի Օլ-
կայի եւ Հճ. Յակոբի կողմէն:

Իսկ վաղը կիւրակէ գիշեր պիտի
ներկայացուի ԵՐՁԱՆԻՆ ՏՂԱՔԵՆԵՐԸ
Ճիւղխաղ 5 արար, ԿԱՊՈՑ ԹԱՇԿԻ-
ՆԱԿԸ կատակախոն թատերախաղ 3
արար:

ԹԻՒՊԱՐՏ ՈՒՋՈՂՆԵՐՈՒՆ

Պուկարահայ կարեւոր քաղաքները
գտնուող մեր գործակալներուն արդէն
ղրկած ենք պէտք եղած քանակու-
թեամբ ԹԻՒՊԱՐՏԻ Բ. հատորին. նոյն-
պէս զրկած ենք Գահրէ, Աղէքսան-
դրի եւ Քանսթանպուլի Ուստի օտա-
նալու համար պէտք է դիմել քաջի
Իրաւունքի խմբագրութեան հետեւեալ
անձներուն:

Ռուսչուգ, Տ. Սարգիս Մանուկեան
Ֆիլիպէ, Պրիգոր Թիւթիւնեան
Սփիւս, Ասատուր Սկրտիչեան
Պուրկազ, Արտաշէս Հարեհ
Սիլիսդրէ, Արթաթ Սարգիսեան
Շուսլա, Ասլան Տօնիկեան
Քօնսթանպուլ, Սիսակ Մէլիքեան
Գահրէ, Կարապետ Էրզնկացեան
Աղէքսանդր, Ստեփան Մազմանեան
Նաեւ քանի մը օրէն մեր շրջուն
գործակալին միջոցաւ պէտք եղած
քանակութեամբ ԹԻՒՊԱՐՏԻ Բ. հա-
տորը պիտի ստանան

Կալաց, Տ. Ղեւոնդ քն. Փափագեան
Պրիգոր Յակոբեան
Սուլիմա, Արփիար Սարգսեան
Պուրէշ, Օննիկ Փափագեան
Պրիգոր Յակոբեան

Պրալտ, Ստեփան քն. Կիւլիւսեան
Իսկ Ամերիկայի մեր յարգող գործա-
կալներէն ու բարեկամներէն ներողու-
թիւն կը խնդրենք իրենց ապաւան-
քին մինչեւ ցարդ ուշացած ըլլալուն
համար: Այս յապաղման պատճառն է
քաթի ծախքին տարապայման ծան-
րութիւնը (հասին 50 սանդիմ) եւ
տեղոյս չոգեմաւային գործակալու-
թեանց ուղղակի Ամերիկայի համար
անտուկ շրջուները: Ուստի ստիպ-
ուած ենք գրեթէ ծանօթ ճամբորդի
մը միջոցաւ զրկել որ քանի մը օրէն
յետոյ հոսկէ ճամբայ պիտի ելնէ:

Печатница Взаимность Варн.

Одговорник Н. Драгос